ՁՕՐՔԻ ԱՆՆԱԽԱԴԷՊ ԿՈՒՏԱԿՈՒՄ ԱՐՑԱԽՈՒՄ

Ստեփանակերտ, 4 Մայիսի, Ա.Տ.Կ.-Մայիսի 3ից նը-կատւում է զօրքի մեծ կուտակում Ստեփանակերտում: Ինչ-պէս տեղեկացանք տարբեր աղբիւրներից, Արցախում տեղա-բաշխւում են Հայաստանի Հանրապետութեան տարածքը լքող ԽՍՀՄ Ներքին Գործերի եւ Պաշտպանութեան նախա-րարութեան ստորաբաժանումները: Դեռեւս երեկ առաւօտ-եան բերդաձորցիները նկատել են, որ Գորիսից դէպի Ստե-փանակերտ է ուղղուել հարիւրատր զինուորական ինքնա-շարժերից բաղկացած մի շարասիւն: Անցած գիշեր նոյն-պէս շարասիւներ են հասել Ստեփանակերտ: Ականատես-ների վկայութեամբ, Ստեփանակերտ են բերուել նաեւ զա-նազան ռազմական սարքաւորումներ, այդ թւում նաեւ ծանր հրասայլեր, ուղղաթիռներ, թնդանոթներ եւ այլն, որոնք թաքցուած են քաղաքի շրջակայքում: Ստեփանակերտում ծառայող ռուս սպաներից ոմանք արդէն իսկ մտահոգութիւն են յայտնել, որ իրենք «կարող են ստիպուած լինել օգտա-գործել այդ զէնքը քաղաքացիական բնակչութեան դէմ»:

Զօրքի աննախադէպ այս կուտակումը ստիպում է պատրաստ լինել նոր դժուարութիւնների: